

ԱՐԴԱՎ ԱՌՈՂՋ  
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԲԺԻՇԿ Գ. Մ. ԳՐԱՆՑՎԻԶ


# ՓՈՍ

ՅԵՎ  
ՊԱՅՔԱՐ  
ՆՐԱ ԴԵՄ

616.5  
4-91

30 JUL 2010

676.5  
9-91  
ԱՐԵՎԱԿ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ



ՅԵՎ ՊԱՅԹԱՐ ՆՐԱ ԴԵՄ

ՊԵՐՓԻԿՈՒ Զ. Ն. ԳՐԺԵԲԻՆԻ  
ԼԱՄՊԱԳՐՈՒԹՅԱՆ

ԹԱՐԱԿ. ՑԵԼԵՆԱ. ԶԱՐԱՆՉՑԱՆ



ԱԶՈՎ-ՍԵՎՃՈՎՑԱՆ ՅԵՐԿՐՈՑԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ուստուլ-Դռն — 1935

26 MAR 2013

0017

ԸՆԿ. ԸՆԹԵՐՅՈՒԴ,

Հայտնիք ու կարծիքն այս գրքի մտավին նետվալ հասցերով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.,  
№ 30, Азово-черноморское Краевое  
Книгоиздательство, армянская секция.

Նամակները կարելի լի ուղարկել առանց  
նամակադրումի:



43464-63

Отв. ред. А. Г. Яваков Пом. тех. ред. Д. М. Джинибалаян  
Изданиe 408/4663 Об'ем 7/8 листа. Статформат А6—105x148  
Уполномоченный 00-11429. Тираж 1000 экз Заказ 4284 Сдано в набор  
3|IX-1935 г. Подписано в печать 29|IX-1935 г.

1 типография им. „Стачки 1902 года“ г. Ростов на Дону.

### ՔՈՍՉ ՏԱՐԱԾՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Դժվար ե պատահել մի այնպիսի մարդու,  
վոր իր կյանքի ընթացքում չի հիվանդացել  
մաշկի վորևե հիվանդությամբ: Դա կախված  
է այն բանից, վոր այդ հիվանդությունն առա-  
ջացնող պատճառները շատ են, իսկ ինչպես  
պաշտպանվել գրանից, միայն քչերը գիտեն:  
Մեր Միության բնակչության միջև բոլոր  
հիվանդությունների 10 տոկոսը տալիս են  
մաշկային հիվանդությունները, այսինքն՝  
ամեն մի հարյուր հիվանդին գալիս ե 10 հի-  
վանդ մաշկային հիվանդությամբ: Իսկ զա-  
նշանակում ե, վոր միլիոնակոր ոռութիներով  
պետք ե հաշվել պետության վասաներն աշ-  
խատավորների մաշկային հիվանդություն-  
ներից այն առնչությամբ, վոր նրանք ժա-  
մանակավորապես կորցնում են աշխատու-  
նակությունը և չեն կարող կատարել ար-  
տադրական պլանները:

Մաշկի հիվանդությունների մոտավորապես կեսը վարակիչ հիվանդություններ են, վորոնց մասին մենք համարյա միշտ կարող ենք ասել, թե ինչպես են առաջանում և ինչն են նպաստում նրանց հայտնվելուն:

Ճիշտ ե, կան և մաշկային այսպիսի հիվանդություններ, վորոնց պատճառը բժշկական գիտությունը մինչև այժմ գեռ չի պարզել, բայց այդ հիվանդությունները բիշ են տարածված և վարակիչ չեն:

Զանազան մաշկային հիվանդությունների տարածված լինեն զգալի չափով կախված երնակշության կուլտուրական և նյութական մակարդակից: Մեր յերկրում աշխատավորների կուլտ-կենցաղային մակարդակը ներկայումս շատ եք բարձրացել և այդ մեզ բերում ե այն համոզման, վոր մոտ ժամանակում այդ հիվանդությունները ԽՍՀՄ-ում հիմնականում կվոչնչանան:

Մաշկային ամենատարածված հիվանդություններից մեկը բուն ն: Նա պատահում է բոլոր յերկրներում և բոլոր ժողովուրդների: մոտ, այս կամ այն չափով ֆիսակով բնակչությանը: Հին ավյաներով, Զինաստանում, որինակ, քոսով հիվանդանում եր մոտավորապես բնակչության մի յերրորդ մասը, իս-

լանդիայում մոտ կեսը, իսկ Աֆրիկայում և Հարավյային Ամերիկայի մի քանի տեղերում բնիկները համարյա պմբողջովին տանջվում եյին քոսից:

Յարական Ռուսաստանում 1913 թ. ամեն մի 10 հազար բնակչից 337 մարդ հիվանդ եյին քոսով, իսկ ընդամենն այդ տարի Ռուսաստանում հիվանդացել եյին 5 և կես միլիոն մարդ:

Մեզանում քոսը կտրուկ կերպով քշանում ե: Դա կարող ե ապացուցել ամեն մի բժշկական աշխատող, վորը վերջին տարիներում աշխատել ե մաշկային հիվանդությունների վրա, այդ մասին ասում են և թվերը: Որինակ, նախկին Սարատովի նահանգում 1907 թվին ամեն մի հարյուր մաշկային հիվանդից քոսով հիվանդ եյին 17 մարդ, իսկ 1932 թվին միայն մոտ 5 մարդ:

Հառաջադիմությունը մեծ և, բայց քոսը գեռ կա ու նրա դեմ հարկավոր ե պայքարել: Իսկ դրա համար հարկավոր ե թշնամուն ճանաչել և այն ժամանակ այդ պայքարի ձեռքը կլինեն պարզ և հասկանալի:


Ամեն մեկը, վորը յուրացնում ե այն հիմնականը, ինչ վոր ասված ե այս գրքում, կարող ե ոգնել քոսի վոչնչացմանը: Այդ խըն-

գերը հեղատանում և նրանով, վոր ԽՍՀՄ-ում՝  
«Ժողովրդական առողջապահությունը, մեր  
յերկրի ընդհանուր կուլտուրայի բարձրաց-  
ման և նյութական հզորության ամրացման  
պայմաններում, դրված և մի այսպիսի բարձ-  
րության վրա, վորին չի հասել վոչ մի յեփ-  
րոպական և արտակըռպական յերկիր» (ընկ.  
Կալինինի ճառից Համառուսական խորհուրդ-  
ների 16-րդ համագումարում):

## ՄԱՐԴՈՒ ՄԱՇԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ


Հարկավոր ե զիտենալ, թե ինչպես և  
կազմված մարդու մաշկը, վորպեսզի կարելի  
լինի ավելի լավ ըմբռնել, ինչ վոր պատմվելու  
յե հետագայում (նայել նկ. 1):

Ցեթե վերջնենք մի կտոր մաշկ և նրա  
կտրվածքը նայենք մանրադիտակի տակ (մե-  
ծացնող գործիք, նայել նկ. 2) կտեսնենք,  
վոր մաշկը բաղկացած ե մի քանի շերտից:  
Ամենավերին և ամենաբարակ շերտը կոչվում  
է վերնամաշկ: Ինչպես և մյուս շերտերը,  
նա բաղկացած ե ամենամանը, իրար հետ  
հյուսված մասերից, վորոնք կոչվում են բջիջ-  
ներ: Մաշկի զանազան խորության վրա, նր-  
անք ունեն զանազան ձև և կազմվածք,



Նկ. 1. Մարդու մաշկի կտրվածքը (մասնակն անողական պահանջմանը). 1 - մասնակն անողական, 2 - սեպականը, 3 - սեպականը, 4 - յիշութանի տարր, 5 - արյունատար, 6 - մաշկամասն անողական, 7 - մաշկը, 8 - աղմամաս, 9 - քրտինի տարր, 10 - մասնակն անողական գեղձ.

բայց վորքան մոտենում ե մակերեսույթին,  
նրանք ավելի ու ավելի տափականում են:  
Մեռնելով նրանք չորանում են և դառնում  
են յեղջերային: Այդպիսի մեռնող բջիջները  
հետզհետե ընկնում են մաշկի մակերեսույ-



Նկ. 2. Մանրադիտակ:

թից, իսկ նրանց տեղը բռնում են մաշկի ցածր շերտերի բջիջները: Նրանք պինդ միանում են իրար հետ և ներկայացնում են

ամուր և դժվարաթափանց թաղանթ, վորը կոչվում է վերնամասեկի յելջերյա ըեր:

Վերնամաշկի տակը, ավելի խորը, գտնվում ե մի շերտ, վոր բաղկացած ե ամուր և խիտ թելավոր միացուցիչ հյուսվածքից, վորն ընդունակ ե ձգվել: Հենց այդ շերտն ել խսկապես կոչվում է մասկ: Դրա տակը, միացնելով մաշկը մարմնի մկանների հետ, գտնվում է նրա յերրորդ շերտը. Նա կոչվում է յենթամասկային նարպային վանդակահյուսվածք, վորովհետև բաղկացած ե, գլխավորապես, ճարպի մանր կույտերից:

Բացի այդ, մաշկի մեջ նրա զանազան շերտերում գտնվում են արյունատար անորներ յեվ նյարդեր, վորոնք ընդունում են զանազան զգայություններ՝ ինչպես տաքություն, ցրտություն և ցավ:

Բացի անոթնորից և նյարդերից, մաշկում գտնվում են մազերի արմատներ և առանձին որգաններ, վորոնք արտազրում են քրրտինք և ճարպ՝ մաշկը յուղելու համար: Այդ որգանները կոչվում են գեղձեր և ունեն խողովակի ու պարկի ձև:

Շնորհիվ այդ կազմվածքին, մաշկը կարող է կատարել այն բարդ խնդիրները, վորոնց համար նա նշանակված ե. որինակ՝ որգա-

Նիզմի պաշտպանությունը վնասվածքներից, ավելորդ ջերմության և ցրտի ներգործության թուլացումը, վնասակար նյութերի հեռացումն որգանիզմից քրտինքի հետ և այլն:


### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՔՈՍՈՎ

Սովորաբար, յերբ ընտանիքում, գլուխում և վորելիցե հանրակացարանում հայտնվի թեկուղ քոսով հիվանդ մի մարդ, իսկույն մի քանի որից, իրար հետեւից սկսում են քոր գալ և մյուսները: Դրանից հետեւում ե, վոր քոսը վարակիչ հիվանդություն ե:

Քոսը հայտնի յե գեռ հին ժամանակ, բայց միայն մոտ 100 տարի առաջ գիտնական-ները պարզեցին, վոր քոսը վարակիչ հիվանդություն ե, վորն առաջ ե գալիս հատուկ գրգռիչի — բոսանանի միջոցով: Դրանից առաջ քոսի պատճառի մասին շատ ելին վիճում, շփոթում ելին եկղեմային (վորքին), բորի քորի և մյուս մաշկային հիվանդությունների հետ, յերբ մաշկը սաստիկ քոր ե գալիս, նույնիսկ մի քանիսը կարծում ելին, վոր դա ներքին հիվանդություն ե՝ «հյութերի քայլքայումից», ինչպես այն ժամանակ ասում ելին, և բժշկում ելին այն արյունահոսությունով և լուծիչ միջոցներով:

Բայց, այն ժամանակից, յերբ 1824 թվին ուսանող բժիշկ Կորսիկացի Ռանուչչին գիտնականների ժողովում հանեց հիվանդի մաշկից գնդասեղով և ցույց տվեց բոլորին քոսաճանճը, բոլոր կասկածները և վեճերը քոսի պատճառի մասին ընդմիշտ վերջացան և քոսի գրգռիչը ձատորեն վորոշվեց:


Քոսի գրգռիչն ավելի մեծ ե, քան մյուս վարակիչ հիվանդությունների գրգռիչները և նրան կարելի յե տեսնել նույն իսկ առանց մանրադիտակի, փոքրիկ, սպիտակ կետի ձե-



Նկ. 3. Խոշորացույց ապակի:


գով: Նրա յերկարությունը մեկ յերբորդ միջմետրի չափ ե (միլիմետրու մետրի մեկ հազարերորդ մասն ե), նա կոչվում ե քոսաճանճ, կամ քորիչ: Յեթե դիտենք նրան մանրադիտակի խոշորացույց ապակուտակ (նկ 3), ապա յերկում ե, վոր նա շատ նման ե այն ձանձին, վորոնք գտնվում են բույսերի վրա:

Բացի մարդու քոսաճանճից, կան շատ տեսակի քոսաճանճեր, ջնաճանճեր և այլն, վորոնք առաջ են բերում նրանց վրա նույնպես քոս։ Մարդիկ քոսով կարող են վարակ-



Նկ. 4. Քոսաճանճը (եղ.)

վել կենդանիներից, բայց նա վոչ միայն շուտով լավանում ե, այլ և սովորաբար անցնում ե ինքն իրեն, առանց բժշկվելու։ Քոսաճանճի մարմնի ձեր յերկարավուն ե,



Նկ. 5. Քոսաճանճը (արու)

այսինքն յերկարությունը լայնությունից քիչ ավել ե, Մեջքն ուռուցիկ ե՝ վշերոս, փորը հարթ շերտավոր։ Փոքրիկ գլուխն ունի չորս ամուր ծնոտ և բեղիկներ, իսկ փորի վրա չորս զույգ վոտիկներ (Նկ. 4 և 5)։

Առաջին յերկու զույգ վոտիկների ծայրերում կան ծծիչներ, վորոնցով քոսաճանձը կպչում ե մարդու մաշկին, նախ բան նրա խորքը թափանցելը։ Հետևի յերկու զույգ վոտիկներն ունեն բեղիկներ, վորոնց վրա քոսաճանձը հենվում ե, յերբ նա մարմինի մեջ մուտք ե փորում։ Եդ և արու քոսաճանձերը մոտավորապես մարմնի նույնանաման կազմություն ունեն, բայց արույի մեծությունը մի փոքր պակաս ե։

Քոսի վարակումն սկսվում է այն ժամանակ, յերբ առողջ մարդու մարմնի վրա ընկնում ե բեղմնավորված եդ քոսաճանձը։ Հետեապես, վարակումն կարող է կատարվել, յեթե սերտ շիտում կա առողջի և հիվանդի միջև։ Դա հաճախ պատահում է այն դեպքում, յերբ անկողնում պառկում են իրարհետա Մինչդեռ մեծերը հաճախ փոքրերին իրենց անկողինն են պառկեցնում։ Իրար կողքի քնելը, մյուս հիվանդությունների ժամանակ ել կարող է առաջացնել վարակում, որինակ, թոքախտ, սիֆիլիս, սուսանակ։ Դրա համար քանի շուտ հրաժարվեք միասին քնելու մնակար սովորությունից, այսքան լավ ե։ Յերեխաների մասին հարկավոր ե հիշել՝ փոր նրանք առանձնապես հեշտ են վարակ-

վում քոսով, վորովհետև նրանց մաշկը բարակ ե և քնքուշ։ Քոսն ինքը շատ հեշտ ե տարածվում նրանց ամերող մարմնի վրա և նրա բժշկությունը դժվար ե։ Յերեխաները հաճախ իրարից վարակվում են խաղի ժամանակ, կովի ժամանակ և այլն։

Մեծերը կարող են վարակվել և սեռական հարաբերության ժամանակ, վորովհետև քոսաճանձը սիրում ե փափուկ մաշկ, ինչպիսին փոր ունեն սեռական որգանները։

Հաճախ քոսը վարակում է ձեռները։ Անտանելի քորից հիվանդն անբնդհատ քորվում է, քայլայելով քոսային անցքերը։ Քոսաճանձերն ընկնում են նրա յեղունդի տակ և սողոսկում մարմնի մակերեսը։ Ուստի հասկանալի յե, փոր ձեռք տալը կարող է հաճախ վարակման աղբյուր լինել։

Բայց կարելի յե վարակվել և առարկաների միջոցով, վորոնցով դրանից առաջ ոգտվում եր հիվանդը։ Քոսաճանձերը կարող են հիվանդի մաշկից անցնել սավանին, բարձի յերեսին, յերեսսրբիչն, ճիլուպին (մոչալկա) և այլն։

Այսպիսով կարելի յե վարակվել և բաղնիքում, յեթե տաք ջրով խնամքով չլիփանանայն նստարանը, վորի վրա լողանում եր հի-

վանդը, կամ յեթե ոգտվեն ուրիշի ճիլուպով առանց յեռացրած ջրով այն լվանալու: Հեշտ ե նաև քոսով վարակվելը, յերբ հագնում են հիվանդի վրա գտնված շորերը, թե կուզ դա լինի ընտանիքի անդամը:

Այս որինակներից արդեն պարզ ե, թե վորքան հեշտ ե քոսով վարակվելը, և վորքան պարզ՝ այդ վարակումից ամեն կերպ պաշտպանվելու անհրաժեշտությունը:

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հիվանդության բոլոր արտահայտության դեպում, վորոնց մասին կխոսենք հետագայում, գլխավոր դերը խաղում ե քոսաձանձի միայն եզր: Արույի դերը միայն եզին բեղմափորելն ե: Խոկ ինքը մտնելով մաշկի անցքերը, մնում ե նրա մակերեսույթի վրա, յեղջուրային շերտի վահանիկի տակ և շուտով փոչնչանում ե: Բեղմնափորված եգն ընկնելով մարդու մարմնի վրա, սկսում ե բուն փորել՝ սերունդ առաջացնելու համար: Սկզբում կանգնելով ուղղաձիգ, գլուխը ցած, նա փորում ե յեղջուրային շերտը, հետո սուզվելով նրա հաստության մեջ (այս բանի համար նրան հարկավոր ե 15—20 րոպե)

սկսում ե անցք փորել նրա սահմանի յերկարությամբ՝ բռնելով առաջին վոտիկների ծծիչներով: Հենվելով հետեւի վոտիկներին և մեջը փշերին, եզր մեկ որում անցնում ե մոտ մեկ միլիմետր: Ժամանակ առ ժամանակ նա կանգ է առնում մի տեղում չորս որ, ձու յե ածում, որը մի հատ, և այդտեղից անցք ե բացվում մաշկի մակերեսույթին (վորտեղից անցնում ե և ողը) ապագա սերնդի համար, և հետո շարունակում ե շարժել (տես նկ. 6, եջ 18):

Ընկնելով մարդու մարմնի մեջ, եզր մաշկից դուրս և գալիս մինչև իր մահը: Իր կյանքի ընթացքում — 6—8 շաբաթ, նա ածում է մոտ հիսուն ձու, վորոնցից 5—6 որ հետո դուրս են գալիս թրթուրներ: Այդ թրթուրներն աստիճանաբար զարգանալով, 2—4 շաբաթվա մեջ զանում են հասակավոր ճանճ: Մոր բացած անցքերից ջանել քոս ճանճերը դուրս են գալիս և տարածվում մաշկի վրա: Եզի ածած ձկերի մի յերբորդ մասից զարգանում են ալուները և մնացած յերկու յերբորդից՝ եզրերը: Նոր սերնդի արուները բեղմնափորում են եզերին, նրանք տալիս են նոր սերունդ և այլն:





Նկ. 6. Քոսի ընթացքը, եդ շնաձանճի գրած  
ձևիկները:

եղը, ընկնելով առողջ մարդու մաշկի վրա,  
կարող ե տալ քոս տարածող ահազին սե-  
րունդ: Իսկ յեթե մարդու մաշկի վրա ընկ-  
նում ե վոչ բեղմնավորված եղ կամ միայն  
քոսաձանճի արուն, ապա քոսը չի դարդա-  
նում:

Քոսի առաջին նշանը, — ամենավաղ և  
աչքի ընկնող, — դա քորն ե: Նա սկսում է  
հենց վարակման առաջին որերից: Ցերեկը  
քիչ նկատելի, իսկ գիշերը քորը դառնում է  
անտանելի և հիվանդության տարածվելու  
հետ զրկում է հիվանդին և քնից, և հանգս-  
տությունից:

Սկզբում կարծում եյին, վոր քոսային քորն  
ուժեղանում և անկողնի տաքությու-  
նից, ինչպես ամեն մի քոս: Հետո յերբ  
սկսեցին ավելի շատ հետաքրքրվել քորի  
ուժեղացման պատճառներով, հատկապես գի-  
շերները, ապա պարզվեց, վոր որինակ՝ հի-  
վանդները, վորոնք աշխատում են գիշեր-  
ները, և ցերեկն արդեն քնել են, համենայն  
դեպս գիշերն ավելի ուժեղ են զգում քորը  
աշխատանքի ժամանակ: Այստեղից պարզ է,  
վոր, քորի ուժեղացման պատճառը տաքու-  
թյունը չե, այլ այն, վոր քոսաձանճը հատ-  
կապես գիշերն է փորում իր անցքերը մարդու

մաշկում, և նրա փորփրոցն ե, վոր առաջ եթերում քորը: Մաշկի մակերեսույթի վրա ապլրող արուն ել միայն գիշերներն ե տեղափոխում:

Քորի սկսվելուց մի քանի որ հետո, առաջ են գալիս քոսի մյուս նշանները: Այն տեղերում, վորտեղ քոսաճանճերն սկսում են փորել իրենց անքերը, և այստեղ, վորտեղ նրանք ջահել քոսաճանճերի և ող մտնելու համար յելք են փորում, յերեսում են սեվ կետեր: Դա կեղտ ե, վորն ընկել ե այդ փոքրագույն անցքերը: Իսկ այստեղ, վորտեղ հիմա գտնվում ե քոսաճանճը, կարելի յե նկատել թափանցիկ հեղուկով փոքրիկ պրոպազակ: Կետերը և պղպջակները միմիանց հետ միացած են կեղտոտ գորշ գծով, վորը քիչ բարձրանում ե մաշկի մակարդակի վրա: Այդ բարձրացրած գիծն անցքի ծածկվածքն ե, վորը փորում ե իր համար եղ քոսաճանճը:

Բայց հիվանդը քորում ե և քորվածքի հետքը միշտ ավելի յե յերեսում, քան քոսաճանճի հետքը: Քոսաճանճի անցքերը և պղպջակները յեղունդներով պոկվում են և կազմում քորվածքներ: Սովորական անմաքրասեր մարդկանց յեղունդների տակ և նույնիսկ մաշկի վրա շատ կեղտ ե լինում, իսկ


փորտեղ կեղան ե, այնաեղ են և շատ թարախ առաջնող միկրոբներ: Դրա համար ել հիվանդությունն սկսվելուն պես, այդ պղպջակները դառնում են խոց, գնդասեղի գլխի մեծությունից մինչև խոշոր սիսեռի չտփ, շուրջը կարմրած և բորբոքված: (Նկ. 7):



Նկ. 7. Քուը ձեռքի վրա Յերեսում են քոսաճեն անցքերը, պղպջակները և թարախ կազմած խոցիները:

Յեղունդներով հիվանդը քայքայում է խոցիների ծածկվածքները, նրանցից գուրս ե գալիս թարախը և քսվում է մաշկն, գրբգոսում ե նրան և առաջ ե բերում կամ եկղեմա կամ մաշկի բոքքորում, վորը յերբեմն

ընդպրկում ե նաև յենթամաշկային հյուսվածքը։ Այդ խոցիկները չորանում են և ծածկվում արնախառն թարախի կեղեսով։



Նկ. 8. Մարմի վրա տարածված  
և բարդացած քոսը

Մյու բարդությունները հաճախ, մանավանդ յերեխաների մոտ, այնքան ուժեղ են զարգանում, վոր առաջին հայացքից դժվար եմինչև անդամ մտածել, վոր այդ բոլորը կատարվել ե քոսից։

Վարդակ, մարդու մաշկի վոր մասերի վրա ավելի հաճախ կարելի յե զիտել այդ յերեվույթները։ Քոսաճանձը կարող ե ծակել մաշկն ամեն տեղ, բայց համենայն դեպս նա գերադասում ե անցքը փորել այստեղ, վորտեղ մաշկն ավելի բարակ ե։ Դրա համար ել քոսաճանձի սիրած տեղերը, վորտեղ առաջին հերթին յերեսում ե քոսը, դա մատների արանքներն են, նրանց կողքերի մակերևույթները, ափի մակերևույթի, ձեռքի և կրծքի մեջ գտնված ծալքերը, կուրծքը ծծերի մոտ (մանավանդ կանանց մոտ), պորտի մոտ գտնվող փորի մասը և սեռական որգանները։

Մյուս տեղերը շատ հազիվ են վարակվում, իսկ յերեսը, վիզը և մեջքը համարյա յերբեք։

Յերեխաների, մանավանդ ծծկերների մոտ, կարող ե տարածվել ամբողջ մարմինի վրա, նույնիսկ յերեսին ու զլխի մազափոր մասում։ Յերեխաների մոտ քոսն ավելի հաճախ

ուղեկցվում եւ թարախտկալված բներով և  
եկղեմյով, քան մեծերի մոտ և ուժեղ տա-  
րածման ժամանակ ու բժշկության բացա-  
կայության գեպքում ասստիլ ուժասպառում  
և յերեխաներին:

## ՔՈՍԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Քոսը, ինչպես և ամեն հիվանդություն,  
հեշտ և շուտ եւ բժշկվում, յերբ նա դեռ  
անուշադիր չի թողնված և չի ել բարդաց-  
վել Դրա համար, յերբ փոք մաշկն սկսվում  
և բոր գալ, հարկավոր եւ պարզել, թե ար-  
դյոք գա քոս չե՞: Իհարեւ կան և մաշկի հի-  
վանդության շատ տեսակներ, վորոնք սկըռ-  
վում են քորից, բայց այդ հարցը կարող է  
լուծել միայն բժշիկը:

Այսպիսի գեպքերում չպետք եւ դիմել նե-  
քիններին (ինչպես հաճախ, դժբախտաբար,  
անում և զյուղերում) կամ զանազան տնա-  
յին միջոցների, վորոնք հաճախ միամն փառ-  
սում են: Դիմելով բժշկական ոգնության,  
կարելի յեւ օւտ ազատվել քոսից:

Քոսի բժշկության ամեն մի միջոցը հե-  
տապնդում եւ սպանել քոսաճանճին ու նրա  
թրթուրներին և զրանով դադարեցնել քորը,

իսկ յերբ այդ նպատակը կատարվի, հիվանդն  
իրեն չի քորի և քորից մնացած բոլոր յե-  
րևույթները կվոչնչանան կամ իրենք իրենց,  
կամ կարձատե բժշկությունից:

Քոսը բժշկելու համար գործածում են Էո-  
սային յուղ, վորը բաղկացած եւ ծծումբից,  
կանաչ սապոնից, կավճից և մաղուտից: Այս  
բաղադրիչ մասերից յուրաքանչյուրն ունի  
իր խնդիրը — կանանչ սապոնը քսելիս մաշկը  
փափկանում ե, վորը ծածկում ե անցքը՝  
վորտեղ ապրում ե քոսաճանճը և գտնվում  
են նրան ձկերն ու թրթուռները, և դրանով  
պատրաստում են մաշկը մյուս նյութերի աղ-  
գեցության համար. կավճն իր փոքրիկ մաս-  
նիկներով մաքրում ե այդ փակված ծած-  
կոցը և բաց ե անում անցքը, իսկ ծծումբը  
և մաղուտը սպանում են քոսաճանճին և նրա  
սերունդը:

Քոսային կամ Վիլկինսոնյան յուղի (անգ-  
լական բժշկի անունն ե, վորն սկսեց նրա  
գործածումը) ամենալավ գործածությունը  
հետեւյալն ե. հարկավոր ե քնելուց առաջ  
լավ լողանալ տաք ջրով և կանաչ սապո-  
նով, իսկ յեթե չկա, հասարակ սապոնով, լավ  
վրփրացնելով, վորպեսզի մարմնից հետանա  
կեղան ու փոշին և նրանք հետագա բժշկու-

թյան ժամանակ չմտնեն փափկացած մաշկի  
մեջ։ Լավ լողանալուց հետո, կոպիտ շրի<sup>ի</sup>  
վրա վերցնել քիչ յուղ և քսել ամբողջ մար-  
մինը, վզից մինչև կրունկը, մինչև անդամ և  
այն տեղերը, վորտեղ դեռ չեն յերեսում քոսի  
նշանները։ Իսկ այն տեղերում, վորտեղ քոր  
և զգացվում, վորտեղ կան պղպջակներ և  
անցքեր, այնտեղ հարկավոր ե առանձնապես  
ուժեղ կերպով քսել յուղը, յեթե դա նույն  
իսկ զավ պատճառե։ Ընդհակառակը, կոնա-  
տակում, կրծքի ծծերի մոտ, սեռական որ-  
դանների մոտ, վորտեղ մաշկը շատ նուրբ  
և բարակ է, յուղը հարկավոր ե զգուշ քսել,  
վորպեսզի մաշկի գրգում չառաջանա։ Յե-  
րեխաններին բժշկելու ժամանակ հարկավոր ե  
նույնպես շատ զգուշ լինել և քսելը կամաց  
կատարել, իսկ յուղի մեջ խառնել 2 - 4 ան-  
գամ վաղելին կամ հալած յուղ։

Յերկրորդ, յերրորդ և չորրորդ որերում  
հարկավոր չե լողանալ և շորերը փոխել, բայց  
յուղը հարկավոր ե քսել գիշերը, այնպիսի  
խնամքով, վոր մարմնի վրա վոչ մի ազատ  
տեղ չմնա։ Հինգերորդ և վեցերորդ որը կա-  
րիք չկա մարմինը նորից քսել և հիփանդը  
մնում ե նույն սպիտակեղենում։ Վերջապես  
յոթերորդ որը հարկավոր ե լավ լողանալ

ուաք ջրով և սապօնով ու փոխել ամբողջ  
սպիտակեղենը, վոչ միայն մարմնի վրայի,  
այլ նաև բարձի յերեսը, սավանները, սըր-  
բիչները և այլն։

Ամբողջ կեղտու սպիտակեղենը, վորը հի-  
վանդի վրա յեր մինչև հիվանդանալը և հի-  
վանդության ժամանակ, հարկավոր ե լվալ  
և յեռացնել մոխրաջրով, բայց քոսաճանճը  
կարող է մնալ վերևի շորերում։ յեթե կա-  
րելի յե դա ել լվանալ և յեռացնել սպի-  
տակեղենի հետ։ Այն շորերը, վորոնք չի կա-  
րելի լվանալ հարկավոր ե դնել լավ վառ-  
ված ոռւսական վառարանի մեջ, կրակը  
դուրս քաշելուց հետո, պինդ ծածկելով մի-  
յերկու ժամով, իսկ շորերը կախել պարան-  
ների վրա կամ հենարաններին։ Ծայրահեղ  
դեպքում կարելի յե սահմանափակվել նրա-  
նով, վոր վերևի շորերը տանում են մարագը  
կամ փայտանոցը և թողնում են այստեղ  
։ որից վոչ պակաս։ Այդ ժամանակամիջոցում  
քոսաճանճը, վորը չի կարող ապրել առանց  
մարդու, կվոչնչանա, իսկ շորերը հագնելուց  
առաջ հարկավոր ե լավ թափ տալ, և խո-  
զանակով մաքրել։

Այդ ձեի բժշկվելու հիմնական պակասու-  
թյունը — յերկարատեսությունն ե։ Մինչև ան-

գամ հաջող բժշկվելու դեպքում, հարկավոր ե մի շաբաթից ավելի: Այդ ժամանակվա ընթացքում բանվորների, կոլտնտեսականների և ծառայողների մի մասը սովորաբար չեն աշխատում, դպրոցականները չեն գնում պարապմունքներին, և այն: Այդ բոլորը շատ թանգ ե նստում պետության վրա: Դրան հարկավոր ե ավելացնել այնպիսի պակասություններ, ինչպես սպիտակեղենի փչացումը. ամբողջ շաբաթն անհրաժեշտ ե ման դալ կեղտուա մազուտի վատ հոտ ունեցող սպիտակեղենով, հաճախ գրգռվում են այդ յուղից, յերբեմն ել նույնիսկ յերիկամունքները հիվանդանում են մազութից, վորը զըտնվում ե յուղում:

Այդ պատճառով բոսը բժշկելու համար առաջարկված են շատ ուրիշ միջոցներ և ձևեր: Մի քանի մեծ քաղաքներում շինված են հատկապես հիմնարկություններ, վորոնք կոչվում են սկաբիոզորիաներ (լատինական բառից «սկաբիես», այսինքն քոս): Այստեղ բժշկությունն ընթանում ե բժիշկների հրակողության տակ, վորտեղ կես ժամվա ընթացքում քսում են հիվանդի մարմինը (խոզակի ոգնությամբ) կանաչ սապոնը, հետո հիվանդին մի ժամով նստացնում են լոգա-

րան, վորտեղ շարունակում են քսել նրան սապոնով: Դրանից հետո հիվանդին քսում են հատուկ բարդ ծծումբայուղով (նույնպես խոզանակով) և փաթաթելով սավանի մեջ, թողնում են մի յերկու ժամով պառկելու: Հետո հիվանդին կանգնեցնում են դուշի տակ և լվանում մարմին յուղը: Այսպիսի ուժեղ բժշկությունից մաշկը շատ ե գըրգուվում: Այդ գրգիռը պակասեցնելու համար հիվանդին թողնում են ելլի կես ժամ ուղայի լուծույթով պատրաստած լոգարանում կամ նրա մարմնին փողի յեն ցանում:

Հիվանդին բժշկելու հետ միասին նրա շորերը և սպիտակեղենն ել յենթարկվում են մշակման (գեղինսեկցիա), վորպեսզի սպանվի նրանց մեջ գտնվող քսածանձը:

Այդ միջոցը շատ ե կրծատում բժշկության ժամանակը, բայց պահանջում է թանգարժեք սարքավորում (լոգարաններ, ջրցցիքներ, դեղինսեկցիայի համար սենյակներ) և հատուկ ծառայողներ:

1921 թվականին մեր խորհրդային գիտնական պրոֆեսոր Դեմյանովիչն սկսեց գործադրել բժշկության մի այնպիսի միջոց, վորը համարյա զուրկ ե մյուս ձեւերի պակասություններից և ունի մի շարք առավե-

լություններ։ Այդ ձեզ շատ պարզ է, մաքուր (չի կեղաստում վոչ շորը, վոչ սպիտակեղենը) և մատչելի յե ամենքին։ Այդ միջոցը կարելի յե գործադրել կյանքի բոլոր պայմաններում յեզ քաղաքում, յեզ կոլտնտեսությունում։ Այդ տեսակի բժշկությունը չի պահանջում վոչ սապոն, վոչ լոգարան, վոչ բաղնիք. ամբողջ բժշկությունը շարունակվում ե ժամ և կես։ Դեղերն եժան են նստում, մաշկը յերեք չի գրգռվում։ Եկզեմայով, թարախակալությունով բարդացած քոսը չի խանգարում բժշկությանը։ Այդ ձեզ հեշտ կերպով կարելի յե գործադրել վոչ միայն մեծերին, այլ և յերեխաներին։ Վերջապես այդ ձեզ պետությանը հնարավորություն ե տալիս ահազին խնայողություն անել, վորովհետեւ հարկավոր չե հատուկ սկարիոզորիաներ կառուցել, կարիք չկա նաև բանվորին աշխատանքից ազատել և նրան հիվանդանոցի թերթ տալ։ Անա թե ինչու այդ միջոցը մեզ մոտ և արտասահմանում շատ տարածված ե, փոխարինելով բժշկության հին ձևերը (յուղ քսելով)։

Քոսի այդ ձեռվ բժշկությունը կայանում է հետևյալում. — հիվանդը, վորի քոսն արդեն վորոշված ե, ստանում ե 2 շիշ։ Մեկում 40

տոկոսանոց գիպոսուլֆիտի լուծույթ ե, մյուսում մաքուր աղաթթվի 5 տոկոսանոց լուծույթ։ Առաջին լուծույթի կես մասը, այսինքն գիպոսուլֆիտը, լցնում են ափսեյի մեջ, հետո հիվանդը թացացնելով իր ձեռքերն այդ լուծույթում, լավ տրորում ե իր մարմինն այդ լուծույթով՝ սկսած գլխից մինչև կրունկները, շմողնելով վոչ մի չորտեղ և առանձնապես խնամքով, մի քանի անգամ տրորում ե այն տեղերը, վորտեղ յերեկում ե քոսը կամ քորը։ Հետո հիվանդը հանգստանում ե, մինչև մարմինը բոլորովին չչորանա. տաք սենյակում այդ բանն արվում ե 10—15 րոպե։ Մարմինի չորությունը նկատելի կլինի սպիտակ փայլուն փառից, վորով ծածկվում ե հիվանդի մարմինը գիպոսուլֆիտի լուծույթով տրորելուց հետո։ Յերբ մի վորեկե տեղ այդպիսի փառ չինի, ապա այդպիսի տեղը հարկավոր ե նորից քսել և սպասել մինչև նա չորանա։

Հետո հարկավոր ե վերցնել յերկրորդ, աղաթթվի լուծույթը, լցնել կեսն անպայման ուրիշ ափսեյում և դրանով նույնպես խնամքով քսել ամբողջ մարմինն առաջին լուծույթի փառի վրայով։ Դրանից հետո նորից սպասել, մինչև մարմինը չորանա։

Չպետք ե չորացումն արագացնել վառարանի  
դեմ կանգնելով կամ շոգ սենյակում սըբե-  
լով մարմինը, փորովհետև քրտինքից կարող  
ե դեղը դուրս գալ:

Չորանալուց հետո ամբողջ բժշկությունը  
նորից կրկնվում է նույն կարգով, վորի հա-  
մար ոգտագործվում ե դեղի մնացած մասը,  
փորը հարկավոր ե լցնել նույն ափսեները,  
փորովհետև յեթե յերկու դեղը խառնվեն  
իրար հետ, խառնուրդը կպղտորվի և չի ներ-  
գործի, Այդ բոլոր բժշկությունը տևում է  
մոտ ժամ ու կես: Վերջացնելով յերկորդը  
անգամ քսվելը և չորանալով, հիվանդը հագ-  
նում է մաքուր սպիտակեղեն և կարող է  
համարվել առողջացած, իհարկե այն պայ-  
մանով, յեթե ամբողջ մարմինը թրջված եր  
այդ լուծույթով: Յերեք որից հետո կարելի  
յե լողանալ բաղնիքում և և գնալ բժշկի մոտ:

Նայած հիվանդի հասակին, բարդություն-  
ներին և այլն, այդպիսի բժշկության ձեռ  
փոխվում ե, յերբեմն պահանջում ե կրկնակի  
գործադրություն, բայց և այնպես ու քոսը  
բժշկող գոյություն ունեցող ձևերից ամե-  
նալավն ե:

Իհարկե, սպիտակեղենը և շորերը նույն-  
պես մաքրվում են, ինչպես յուղային բժշ-

կության ժամանակ, վորի մասին արդեն  
խոսք յեղել ե:

## ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՈԱՆՎԵԼ ՔՈՍԻՑ

Ամեն մի հիվանդությունից պաշտպանվելու  
ավելի հեշտ ե, քան նրանից բժշկվելը: Քո-  
սից պաշտպանվելու համար հարկավոր է  
հետևել, վորապեսզի քոսածանձը չընկնի մեր  
մարմնի վրա: Ամենից հաճախ նա քաշվում է  
մեր ձեռքերին, բայց քանի նրան չի հաջող-  
վել թափանցել մաշկի խորքը, նրան հեշտ է  
հեռացնել ջրով և սապոնով: Դրա համար  
հարկավոր է ձեռքերը լվանալ ինչքան կա-  
րելի յե հաճախ, թե՛ աշխատանքից հետո, թե՛  
քննելուց առաջ, և թե՛ ուտելուց առաջ: Մաք-  
րասեր մարդիկ ընդհանրապես քիչ են հի-  
վանդանում մաշկի վարակիչ հիվանդություն-  
ներով, իսկ քոսով համարյա յերբեք:

Բնակարանի մաքրությունը, ամեն շաբաթ  
բաղնիքում լողանալը, բոլոր սպիտակեղենը  
շուտ-շուտ փոխելը, ուրիշի սրբիչով ոգտվե-  
լուց հրաժարվելն, առանձին անկողին ունե-  
նալը՝ արդ բոլորը նախազգուշության մի-  
ջոցներ են, վորոնք պահպանում են քոսից և  
շատ ուրիշ հիվանդություններից: Շատ լավ

կլինի հրաժարվել ձեռք սեղմելուց, քանի  
վոր ան մաքրասեր մարդկանց ձեռքերը կարող  
են վարակման աղբյուր լինել: Թևե մարդիկ  
քիչ են վարակվում կենդանիներից և հիվան-  
դությունն անցնում է հաճախ առանց բժշ-  
կության, բայց լավ ե չենթարկվել և այդ  
փորձանքին: Չիերից մարդիկ վարակվում են  
նրանց հեծներու, խնամելու և ձիասարքը  
տեղափոխելու ժամանակ, իսկ կատուներից  
և շներից ամենից հաճախ յերեխաները վա-  
րակվում են նրանց հետ խաղալու ժամա-  
նակ: Կենդանիների մոտ քուը առաջանում  
ե զանազան կերպ, բայց հիմնական նշանը  
քորն ե, վորից անասունը անընդհատ քոր-  
վում ե, կորցնում քունը և ախորժակը: Դրա  
համար հարկավոր ե ուշագրությամբ հետե-  
վել կենդանիների մաքրությանը, խնամքով  
լվալ ձեռքերը, յերբ դիպչում ես նրանց, իսկ  
քոսի առաջին կասկածի դեպքում՝ կենդա-  
նուն տանել անասնաբուժարան: Ընտանի  
կենդանիներին, կատուներին, շներին չպիտի  
սովորեցնել անկողնում քնել և թույլ չտալ  
յերեխաներին նրանց հետ խաղալ:

Յեթե ընտանիքում մի վորեե մեկի մոտ  
նկատվում ե քոր, վորն ուժեղանում ե գի-  
շերները, ապա առանց ժամանակ կորցնելու

պետք է հիվանդին տանել բժշկի կամ բու-  
ժակի մոտ, քանի դեռ հիվանդությունը չի-  
տարածվել և քանի դեռ չեն հիվանդացել ըն-  
տանիքի մնացած անդամները:

Այժմ հարկավոր է խոսել հասարակական  
նախազգուշացման պլոֆելակտիվ միջոցների:  
մասին, այսինքն այն միջոցների մասին,  
յերբ ավերդյան կողեւկտիվը նսիխազգութանում  
ե եորի վարակումից:

Այդ միջոցներին վերաբերվում են.

1. Բժշկական կանոնավոր հսկողություն  
դպրոցներում, կայաններում, մանկաներում,  
հանրակացարաններում, կոլտնտեսություն-  
ներում, խորհանտեսություններում և այլն,  
վորպեսզի ժամանակին կարելի լինի զտնել,  
առանձնացնել և բժշկել հիվանդին և մյուս-  
ներին չենթարկել վարակվելու վտանգին:

2. Աշխատավորների աշխատանքի, կեն-  
ցաղի և նրանց շրջապատող պայմանների  
առողջապահական հսկողություն, վորպեսզի  
հնարավոր լինի գտնել և հեռացնել բոլոր  
այն պայմանները, վորոնք ատեղծում են աշ-  
խատավորների հիվանդությունով վարակ-  
վելու վտանգը:

3. Առողջապահական - լուսավորչական աշ-  
խատանք (դասախոսություն, զբույցներ կո-

Վեկտիվ ընթերցանություն) վորը բարձրացնելով ընդհանուր կուլտուրական զարգացումը, տալիս ե հիվանդությունների և նրանց դեմ պայքարելու ձևերի մասին գիտելիքներ:

Բայց այս ուղղությամբ շատ բանի կարելի յե հասնել և աշխատավորների ինքնագործունեյության ճանապարհով:

Վերցնենք, որինակ, մարմնի մաքրության հոգսը: Չե վոր մաշկի վարակիչ հիվանդությունների մեծամասնությունը, նույն ժվում քուը, ինչպես արգեն ասված ե, պատահում ե հենց այն պատճառով, վոր մաշկից իր ժամանակին չեն հեռացնում քրտինքը և կեղտը, այդպիսի մաշկի վրա արագ զարգացող միկրոբներով:

Բայց տանը լողանալը շատ հոգս ե պահանջում (ջուր պատրաստելը, կարգի բերելը ըողանալուց հետո, վառելիքի ծախսը); Ավելի հեշտ ե և հարմար կառուցել հասարակական բաղնիք: Հարկավոր ե միայն նրան մաքուր պահել և ապահովել առողջապահական հսկողությամբ:

Դրա համար ամեն մի կոլտնտեսության մեջ իր անդամների հոգատարությունը հարկավոր ե սկսել հասարակական բաղնիք կառուցելով, իսկ նրան կից դժվար չի լինի

հարմարեցնել լվացքատուն և սենյակ՝ ախտահանելու համար վարակիչ հիվանդությունունեցողների կամ վողոտների շորերը:

Ինչքան մարդը ֆիզիկապես շատ ե աշխատում, այնքան հաճախ նա պետք ե լողանաւ: Աշխատանքից հետո ամեն անդամ մարմինը ջրով շփելը, ուտելուց առաջ ձեռքերը լվանալը, բաղնիքում շաբաթը մի անգամ հիմնավորապես լողանալը և սպիտակեղենն ամբողջությամբ փոխելը խիստ կպակասեցնեն վոչ միայն քոսով հիվանդանալը, այլ և մյուս մաշկային հիվանդությունները: Յեղունգների կարծ կարելը հեշտացնում ե նրանց մաքուր պահելը. դա կարեոր ե նրա համար, վոր մաշկի վարակիչ հիվանդությունների ժամանակ յերկար յեղունգները, վորոնց տակը բորելու ժամանակ մտնում են և քոսաճանճերը և հիվանդացնող միկրոբները, ամենից շատ նպաստում են հիվանդությունները տարածելուն: Շատ բան ե կախված նաև հագուստից, յեթե աշխատանքից հետո չփոխեն: Փոշին և կեղալը, վորոնք մնում են շորերում, մանավանդ յեթե, ինչպես հաճախ պատահում ե, նրանք ուշ են լվացվում և մաքրվում, նորից դիպչում են մարմնին և կեղառուելում նրան:

Հարկավոր և ուշագրություն դարձնել նա-  
յել բնակարաններում մաքրություն պահ-  
պանելու վրա: Յեթե բնակարաններում ամեն  
որ թաց շորով մաքրում են փոշին, հաճախ  
լվանում են հատակը, ձմեռը և ամառը թար-  
մացնում են ողը, ամեն որ հողմահարում  
անկողինը, ապա այս բոլոր միջոցները հնա-  
րավորություն չեն առ զարգանալ պարա-  
զիտներին և մարդիկ չեն տուժի սեփական  
անմաքրությունից:

Անմաքրասեր սովորությունների արմա-  
տախիլ անելը, առողջապահության հոգար,  
դա վոչ միայն ամեն քաղաքացու անձնական  
գործն ե, այլ ընդհանուր գործ ե, վորով-  
հետեւ այս բոլոր առողջապահական միջոցա-  
ռությունները, վորոնք ամբողջությամբ կազմում  
են այսպես կոչված առողջապահական մի-  
նիմությունը, ամբապնդում են խորհրդային յեր-  
կրի աշխատավորների առողջությունը և  
պաշտպանում են նրանց աշխատունակու-  
թյունը:

## ՔՈՍՈՎ ՀԻՎԱՆԴԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հիւի՛ր, վոր իեզանից կարող են վարակվել  
յել fn ընտանիքը յեվ fn ծանոթները:

Բարեվիր յել մենաս բարով արա առանց  
ձեռք սեղմելու:

Քնիր առանձին յել միայն fn անկող-  
նում:

Մրգիր միայն fn սրբիչով:

Բժշկվիր բժշկի կամ բուժակի մոտ յեվ  
վոչ թե նեմիմի մոտ: Մի՛ լսիր սգես մարդ-  
կանց խորհուրդներին:

Խնամքով, առանց ըսապելու յեվ նիւս  
գործադրիր նշանակված բժշկաթյունը:

Բժշկվելուց հետո մի անգամ ել ներկա-  
յացիր բժշկին:


Յեթե չփոխես բոլոր սպիտակեղեններդ  
յեվ ուրերդ բժշկվելուց հետո, նիվանդու-  
թյունը կվերադառնա:

Վորպեսզի նորից հոսով չիվանդանաս,  
լավ յուրացրու ավրող այս գրես գրվածքը  
յեվ ոգնիր կոյսնեսությանն ու ձեռնար-  
կությանը պայքարել հոսի գեմ, պայքարել  
առողջ կյանքի համար:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Քոսը տարածված հիմանդրություն և . . . . .	3
Մարդու մաշկի կազմությունը . . . . .	6
Ինչպես են վարակվում քոսով . . . . .	10
Հիմանդրության դարձացումը . . . . .	16
Քոսի բժշկությունը . . . . .	24
Ինչպես պաշտպանել քոսից . . . . .	33
Քոսով հիմանդր հիշատակարանը . . . . .	38



«Ազգային գրադարան



NL0279845

6217

ԳԵՆԸ  
Цена 30 դր.  
коп.

մաթ  
գր 2

На армянском языке

В М ГРИНЕВИЧ

ЧЕСОТКА И БОРЬБА  
С НЕЮ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н-д. Буденновский пр. № 53

ԳՐԱԴԱՐԱՆ  
Առայլ-Դօն Մուկովսկայա, № 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԿԳՈՑԵՆՏՐ)